02/10.1/21843-17 2017-10-04

AJV-41-02 2017-09-28

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ԱՐԱ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սաղաթելյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-119-29.08.2017-ԱՍ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2017 թվականի սեպտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 1089-Ա որոշումը:

Հարգանքով՝

ՎԱՀԵ ՍՏԵՓԱՆՅԱՆ

«ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-119-29.08.2017-ԱՍ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներկայացված «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-119-29.08.2017-ԱՍ-011/0) (այսուհետ՝ օրենքի նախագիծ) կապակցությամբ Հայաստանի Հանրապետության կառավարությունը հայտնում է, որ ներկայումս աշխատանքներ են իրականացվում մինչև 2013 թվականի հունվարի 1-ը ընկած ժամանակահատվածի աշխատանքային ստաժը հաշվարկելու (սոցիալական վճարներ կատարելը կամ աշխատավարձ ստանալը հաստատելու) համար հիմք ընդունվող տեղեկատվության մատչելիությունը (հասանելիությունը) բարելավելու, այդ թվում՝ այդ տեղեկատվությունն ամբողջականացնելու (դասակարգելու) համար:

Մասնավորապես, արդեն իսկ ներդրվել է Հայաստանի ազգային արխիվի հետ տեղեկատվության փոխանակության համակարգ, որը հնարավորություն է տալիս աշխատանքային ստաժի մասին տեղեկատվությունը (արխիվային փաստաթղթերը) ստանալու համար էլեկտրոնային եղանակով կատարելու հարցում և ստանալու պատասխան:

Միաժամանակ, հաշվի առնելով առանց հիմքերի տրված փաստաթղթերի հիման վրա աշխատանքային ստաժի հաշվարկման կապակցությամբ առկա ռիսկերը՝ աշխատանքային ստաժը հաշվարկելու ընթացակարգերը կատարելագործելու նպատակով աշխատանքներ են կատարվում «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգը լրամշակելու համար: Մասնավորապես, նախատեսվում է միասնական ենթահամակարգի շրջանակներում ամբողջացնել գործատուների և նրանց կողմից

կատարված սոցիալական վճարների մասին տեղեկատվությունը և «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգում կիրառել ինքնաշխատ եղանակով:

Ենթահամակարգի ներդրման արդյունքում «Էլեկտրոնային կենսաթոշակ» տեղեկատվական համակարգում ինքնաշխատ եղանակով կկիրառվեն նաև «Եկամտային հարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված տեղեկատվական բազայի տվյալներն անձի աշխատանքային գործունեության (աշխատավարձ ստանալու և եկամտային հարկ վճարելու) մասին, իսկ ամբողջացումից հետո՝ նաև անհատական (անձնավորված) հաշվառման «Պառնաս» տեղեկատվական համակարգի տվյալները 2004-2013 թվականների ժամանակահատվածում կատարված սոցիալական վճարների (սոցիալական վճարների հաշվարկման օբյեկտ համարվող եկամտի) մասին:

«Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-96-Ն Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների և Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի օգոստոսի 18-ի N 882-Ն որոշման շրջանակներում աշխատանքներ են իրականացվում նաև աշխատանքային գրքույկներն սկանավորելու և դրանցում ներառված տեղեկատվությունը պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարանում ներառելու համար (նախատեսվում է ավարտել 2019 թվականին):

Նախատեսվում է նշված աշխատանքների արդյունքում անդրադարձ կատարել նաև աշխատանքային ստաժի հաշվարկման (հաշվառման) ընթացակարգերին (իրավակարգավորումներին), այդ թվում՝ աշխատանքային ստաժը հաստատող փաստաթղթերին:

Միաժամանակ հայտնում ենք, որ օրենքի նախագծի ընդունման դեպքում՝

1) այլ հավասար պայմաններում (աշխատանքային ստաժում հաշվարկվող ժամանակահատվածի մասով) ենթադրում է Հայաստանի Հանրապետության պետական

բյուջեից լրացուցիչ ֆինանսական միջոցների հատկացման անհրաժեշտություն, որի չափը հնարավոր չէ որոշել.

2) եռամսյա ժամկետում համապատասխան փոփոխություններ կկատարվեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մայիսի 5-ի «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 665-Ն որոշման մեջ:

Ելնելով շարադրվածից, Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է օրենքի նախագծի քննարկումը հետաձգել մինչև նշված աշխատանքների ավարտը և աշխատանքային ստաժը հաստատող փաստաթղթերին անդրադառնալ աշխատանքային ստաժի հաշվարկման (հաշվառման) նոր ընթացակարգերի համա-տեքստում:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-119-29.08.2017-ԱՍ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-243-Ն օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասից հանել «1992 թվականի հունվարից մինչեւ 2013 թվականի հունվարի 1-ը՝ նաեւ սոցիալական վճարներ կատարելը կամ աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթուղթը,» բառերը, իսկ 1-ին մասի երկրորդ պարբերությունը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ օրենքի նախագծի անհրաժեշտության

Նախագծի նպատակը կենսաթոշակ նշանակելիս ՀՀ քաղաքացիներից պահանջվող փաստաթղթերի քանակը սահմանափակելն ու դրանց ներկայացնելը իրատեսական դարձնելն է: 1992-2013 թվականը ընկած ժամանակահատվածում գործող հարկային օրենսդրությամբ հարկային գործակալը հարկ վճարողներին եկամուտներ վճարող իրավաբանական անձն է, անհատ ձեռնարկատերը, հիմնարկը, տեղական ինքնակառավարման մարմինը, որի վրա, դրված է եղել հարկ վճարողներին եկամուտներ վճարելիս հաշվարկելու, պահելու/ գանձելու պարտավորությունը: Ելնելով, նրանից, որ 1997 թվականից օրենքով սահմանվել եւ դրանից առաջ նույնպես վարձու աշխատողը չի եղել հարկային գործակալ, չի ունեցել հարկային պարտավորություն, նրանից այդպիսի փաստաթուղթ պահանջելը հիմնավորված չէ եւ առաջացնում է ավելորդ, օրենսդրորեն չհիմնավորված քաշքշուկ: